վեցաձայն խմբերգ

վեցաձայն
խմբերգ

Վեցաձայն խմբերգ

Բանաստեղծությունների ժողովածու

A/15420

14783

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

«Մերանի» հրատարակչություն

Թբիլիսի — 1977

Վրաստանի սովետական գրողների միության հայկական մասնաճյուղի շուրջը համախմբված են մեկ տասնյակից ավելի երիտասարդ բանաստեղծներ։ Այստեղ միայն վեցի ստեղծագործություններից են նմուշներ ամփոփված։ Ժողովածուում տեղ գտած հեղինակներից յուրաքանչյուրը փորձում է իր ուրույն ձայնով մասնակցել պոեզիայի համերգին։

С $\frac{70403-123}{М\ 604(08)-77}$ 142—77

© «ՄԵՐԱՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 1977։

ԱՆՄԱՐ ՀՈՒՐ

(Կոմիտասին)

Երգի թովիչ հնչյուններով
Հոգի գերող հուր էր նա,
Իր լեն սրտում հազար կրակ,
Հազար արև անթեղած...

Ասուպ էր նա, ասուպի պես
Փայլեց, անցավ, մոխրացավ...
Ու այդ մոխրից անվերջ հառնող
Անմարելի հուր դարձավ...

Նա՝ աղբյուրի ծկլթոցում,
Հակինթ ցողի շափաղում,
Շշունջի մեջ, մրմունջի մեջ,
Գարնան հովի նուրբ տաղում...

Երգի թևով թե որ դիպավ,
Գերի ես հո ւր-հավիտյա՜ն...
Հոգու ծուխը երկինք հանող
Հրաշք-անմար հո՛ւր է նա։

ԲԱՑԻԿ ՄԱՅԻՍՅԱՆ

Մի բացիկ է սա, հասարակ բացիկ,
Վրան՝ մայիսյան ծաղիկներ ժպտուն,
Որ ամեն փակ դուռ ու սիրտ կբացի,
Կբերի իր հետ մի շող ամեն տուն։

Ծաղկունքի միջից այտերը մանկան,
Աչերը վառման ճառագում են հուր,
Հմայում են ու թովիչ են այնքա՜ն,
Տալիս են, ասես, մայիսին նոր բույր։